ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 09 – Ա 21 հունվարի 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <ԳԱՎԱՌԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ > ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԿՈՆԿՐԵՏ ՄԱՍՆԱԿՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված <<Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության /նշանակման/ մրցույթի կարգ>>-ի 69-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Գավառի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացված մրցույթի արդյունքի վերաբերյալ բողոքը քննող Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2019 թվականի հունվարի 16-ի N 8-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 21-ի եզրակացությունն.

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Գավառի պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար 2019 թվականի հունվարի 11-ին անցկացված մրցույթի արդյունքը՝ մրցույթի մասնակից Կարեն Ֆրունզիկի Մինասյանի մասով թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ